



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 օգոստոսի 2021 թվականի N 29 -Ա

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ԶԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՉԱՍԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով համայնքի *ավագանին որոշում է.*

Հաստատել Գեղարդ համայնքի ավագանու ութերորդ նիստի օրակարգը:

1. Կոտայքի մարզպետարանի կողմից 2021 թվականի երրորդ եռամսյակում Գեղարդ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին:
2. Կոտայքի մարզի Գեղարդ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին:
3. Կոտայքի մարզի Գեղարդ համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին:
4. Կոտայքի մարզի Գեղարդ համայնքում տեղական տուրք և /կամ/ վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը սահմանելու մասին
5. Կոտայքի մարզի Գեղարդ համայնքի տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լուրջությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամեր սահմանելու մասին:
6. Կոտայքի մարզի Գեղարդ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը, աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն տրամադրելու պայմանները, կարգը և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:
7. Գեղարդ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 18-ի N02-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
8. Գեղարդ համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին:
9. Կոտայքի մարզի Գեղարդ համայնքի տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության


օբյեկտների տեղակայմանը /հեռավորությանը/ ներկայացվող պահանջները սահմանելու մասին:
10. Կոտայքի մարզի Գեղարդ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման,
տեղադրման կանոններն ու չափորոշիչները հաստատելու մասին:

Կողմ-3

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԹԱՌՈՅԱՆ ԺԻՐԱՅԻ




ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԳԱՐ



ՏՈՆՈՅԱՆ ՆԱՐԻՆԵ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 օգոստոսի 2021 թվականի N 30 -Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետարանի կողմից Գեղարդ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ 2021 թվականի օգոստոսի 11-ի N 10 արձանագրությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն 2021 թվականի հուլիսի 7-9-ն ընկած ժամանակահատվածում Կոտայքի մարզպետարանի կողմից Գեղարդ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ 2021 թվականի օգոստոսի 11-ի N 10 արձանագրությունը:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ հայտնաբերված խախտումները և թերությունները սահմանված ժամկետներում վերացնելու և շտկելու ուղղությամբ և վերջնական արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Գեղարդ համայնքի ղեկավար Սանասար Թառոյանի վրա:

Կողմ-3

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԹԱՌՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՏՈՆՈՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ



